

- **Դեմոկրիտոս** (Democritus, յուն.՝ Dēmókritos, 460 – 371 մ.թ.ա.)

Ծնած է Աբդերա (Abdera, Յունաստանի հիւսիսը): Աշակերտած է՝ Լեւկիպոսի եւ հետեւած ու զարգացուցած անոր բնափիլիսոփայական հիւլէական-ատոմական ուղղութիւնը: Դեմոկրիտոսի համաձայն, նաեւ կրակը, ոգին, հոգին ու աստուածները կազմուած են անթիւ ատոմներէ: Դեմոկրիտոս ունի աւելի քան 50 երկեր, որոնք դժբախտաբար չեն պահպանուած: Անոնցմէ միայն հատուածներ հասած են մեզի հետագայ իմաստասէրներու միջոցով (Պլատոն, Արիստոտել, եւայլն...):

Հարուստ ընտանիքի զաւակ, առիթը ունեցած է ճամբորդելու զանազան երկիրներ եւ ընդարձակած իր գիտելիքներու հորիզոնը: Ծանօթ է նաեւ «խնդուն փիլիսոփան» մակդիրով, որովհետեւ *Դեմոկրիտոս* եղած է լաւատես ու զուարթ տրամադրութեամբ:

Դեմոկրիտոս⁽⁶⁾ նաեւ բարոյախօս մըն է:

- **Էպիկուրոս** (Epicurus, յուն.՝ Epíkouros, 342 – 271 մ.թ.ա.)

Հելլենիստական շրջանէն *Էպիկուրոս* եւս հետեւորդ մը կը նկատուի՝ Դեմոկրիտոսի բնափիլիսոփայութեան հիւլէական-ատոմական ուղղութեան: Ան եղած է հիմնադիրը, իր անունով կոչուող փիլիսոփայական ուղղութեան՝ Էպիկուրականութեան (Epicureanism) եւ Կեպոսի դպրոցին (յուն.՝ kēpos = պարտեզ):

Էպիկուրոս⁽⁷⁾ նաեւ բարոյախօս մըն է:

- **Լուկրեցիոս** (լատ.՝ Titus Lucretius Carus, 98 – 55 մ.թ.ա.)

Հռոմէացի բանաստեղծ եւ բարոյախօս-փիլիսոփան, եղած է հետեւորդ՝ Էպիկուրականութեան ու գրի առած՝ Էպիկուրոսի ուսմունքը: Այստեղ ան կը յիշուի որպէս՝ բնափիլիսոփայութեան հիւլէական-ատոմական ուղղութեան հետեւորդ:

7. Սոփեստներ

Սոփեստ (յուն.՝ sophistês), կը նշանակէ՝ իմաստութիւն բերող. իսկ այս ուղղութեան հետեւորդները, դէպի ժողովրդավարութիւն ընթացող Յունաստանի մէջ, շրջուն ուսուցիչներ էին եւ գլխաւորաբար կ'ուսուցանէին՝ հռետորութիւն, բարոյագիտութիւն, արուեստ (երաժշտութիւն), իրաւական փաստարկում, եւ ընդհանուր զարգացում: Սոփեստներէն առաջ, նախասոկրատեան փիլիսոփայութիւնը, ընդհանրապէս առնչուած էր բնութեան, նախանիւթին (յուն.՝ archê), բնագիտութեան ու ուսողութեան (մաթեմատիկային). իսկ սոփեստներու հետաքրքրութեան կեդրոնը դարձաւ, նոյնիսկ՝ մարդը: Սոփեստներու համաձայն, շատ կարեւոր է մտածելը եւ մանաւանդ

(6) **Դեմոկրիտոսի** (յուն.՝ Dēmókritos, 460 – 371 մ.թ.ա.) մասին, տե՛ս նաեւ էջ 51:

(7) **Էպիկուրոսի** (յուն.՝ Epíkouros, 342 – 271 մ.թ.ա.) մասին, տե՛ս նաեւ էջ 57 եւ 60: